

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ս. Միւռոնի օրհնութիւնը յետաձգում է

Ի նկատի ունենալով, որ Ռուսաստանում և Կովկասում համարեա ամենուրեք ճարակուած է խոլերան և մեծ համախմբումները կարող են աւելի աղետաբեր լինել ու համաճարակին աւելի ընդարձակութիւն տալ, Վեհափառ Հայրապետը տարս այս սեպտեմբերի 12-ին նշանակած Ս. Միւռոնի օրհնութիւնը բարեհաճեց անորոշ ժամանակով յետաձգել, որի մասին յայտարարում է յընդհանուր գիտութիւն։

ձեռնհաս հոգաբարձական և մանկավարժական խորհրդոց առաջի առնել Մեզ ի ձեռն Գերաշնորհութեան Ձերոյ զտեղեկութիւնս և զկարծիս իւրեանց զծրագրէդ։

Մատթէոս Բ. Կաթուղիկոս Ամենայն Հայոց

12 օգոստոսի 1910 ամի
Թ. 1838—1842

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Նորին Սրբութեան Տփխիսում մատուցուած 500 ռ. ոչնահամբոյրը և առաջադրուեց պահել անձեռնմխելի նախորդ 2000 բուբլու հետ և տոկոսները գործադրել Ճեմարանի պէտքերի վերայ։ 1910 թ. յուլիս 23. թ. 1701.

— Մակագրութեամբ յանձնարարուեց փութով Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովին ծածկել Մայր Տաճարի տանիքը ժամանակաւորապէս երկաթէ թիթեղով ապահովութեան համար։ 24-ն յուլիսի. թ. 1724.

Կոնդակ Ամերիկայի Հայ եկեղեցու երեսփոխանական ժողովի անունով, որով ուղարկուեց Առաջնորդական թեկնածուների եռանուն ցանկը և յանձնարարուեց նոր առաջնորդի ընտրութիւն կատարել։ 1910 թ. 24 յուլիս. թ. 1740.

— Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի անունով, որով Զմիւռնիայի առաջնորդական տեղապահ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունին կարգուեց Ամերիկայի Ուստը քաղաքի հոգևոր հովիւ։ 1910 թ. 24-ն յուլիսի թ. 1741.

— Զմիւռնայի Առաջնորդական Տեղապահ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունու անունով, որով համաձայն Ուստը քաղաքի եկեղեցական Հոգաբարձութեան ընտրութեան և Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի միջնորդութեան կարգուեց Ամերիկայի Ուստը քաղաքի հոգևոր հովիւ։ 26-ն յուլիսի. թ. 1742.

Կոնդակ Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի անունով, որով գոհունակութիւն յայտնուեց Վանքի բարեաք կառավարութեան առթիւ Նորին Սրբութեան Մայր Աթոռից բացակայութեան ժիջոցին։ 1910 թ. յուլիս 26. թ. 1743.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով Սաղմոսավանքի տեսչութիւնը յանձնուեց Տ. Խաչիկ Ծ. վարդապետ Դատեանին։ 26-ն յուլիսի. թ. 1744.

— Տ. Խաչիկ Ծ. վարդապետ Դատեանի անունով, նոյն իմաստով։ 26-ն յուլիսի. թ. 1745.

Գրութիւն Վանի առաջնորդական տեղապահ արժ. Մեսրոպ ա. քահանայ Ճանիկեանի անունով, որի հետ ուղարկուեց 406 ռուբ. 55 կ. փոխանակագիրը № 1303 Վասպուրականի չորս վանքերին պատկանեալ Տփխիսում գտնուած կալուածների արդիւնքը։ 30-ն յուլիսի, թ. 1764։

— Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովի Տ. Նախագահի և Տ. Տ. Անդամների անունով, որով հաստատուում է Մայր Տաճարի վերանորոգութեան համար կազմած մրցանակի (կոնկուրսի) ծրագիրը, որ կազմել է Տբփխիսի ճարտարապետների և գեղարուեստագէտների Մասնախումբը։ 31-ն յուլիսի. թ. 1775.

— Վրաստանի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Գարեգին արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց արձակել Հաղպատի վանահայրութեան պաշտօնից Տ. Գեղամ վարդապետին, կարգելով նորա տեղը ժամանակաւորապէս նոյն վանքի վանահայր Տ. Զաքարիա վարդապետին, իսկ Տ. Գեղամ վարդապետին նշանակել Սանահնի վանքի միաբանութեան։ 31-ն յուլիսի. թ. 1776.

ՓԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—Սինոդը լսելով Ալէքսանդրոպոլի Հոգևոր կառավարութեան տարեւոյս յունիսի 22-ի յայտարարութիւնը, որոշեց թոյլ տալ նոյն կառավարութեանը իւր ատեանը տեղափոխել յաջորդարանին կից բնակարանը, ուր այժմ նոտարի գրասենեակն է, համաձայնութեան գալով Ս. Առուածածին եկեղեցու ծխ. հոգաբարձութեան հետ վարձի վերաբերութեամբ։ Այս վճռի մասին տեղեկութիւն տալ Երևանի կոնսիստորիային։ 2-ն յուլիսի. թ. 430.

—Սինոդը Ցովէլ վարդապետին նշանակեց Մողնոյ Ս. Գէորգայ վանքի վանահայր և Աբարանի գործակալ, որի մասին յայտնեց Երևանի կոնսիստորիային և Ցովէլ վարդապետին՝ նոյն կոնսիստորիայի միջոցով։ 7-ն յուլիսի. թ. 433.

—Սինոդը լսելով Թերեքեան շրջանի պետի յունիսի 27-ին № 27886 գրութիւնը, պատուիրեց Վրաստանի Հայոց կոնսիստորիային կարգադրել՝ ընդունել Դրիսա Ցուցովին հայ եկեղեցու ծոցը, յայտնելով Ցուցովին, թէ նրա № 2437 անցագիրը յետ չէ ստացուած Թերեքի շրջանի պետից, որից ինքն կարող է յետ խնդրել իւր անցագիրը։ 7-ն յուլիսի թ. 434.

—Սինոդը լսելով ներքին գործոց նախարարութեան Հոգևոր գործերի դեպարտամենտի յունիսի 15-ի № 5969 թուղթը և կից ցուցակը, որով բարձրագոյն շնորհուած են հետևեալները

Ա. Ս. Աննայի 2-րդ աստիճանի.

1. Կարապետ վարդապետ (այժմ եպիսկոպոս և առաջնորդ Ատրպատականի Հայոց) Տէր Մկրտչեանին.
2. Երևանի Ցովսէփ աւագ քահանայ Մելեանին.

Բ. Ս. Ստանիսլաւի 2-րդ աստիճանի՝

3. Լևոն վրդպտ. Փսերեանին (Նախիջևանի նախկին փոխանորդ).
4. Տփխիսի հողաչափական դպրոցի կրօնուսոյց Ներսէս ա. քհնյ. Ղամազեանին.

5. Նաֆթալուղի Աղէքսանդր քհնյ. Վարդանեանին

Դ. Ս. Անանայի 3-րդ աստիճանի.

6. Տփխիսի ա. արական գիմնազիայի կրօնուսոյց Գաբրիէլ ա. քհնյ. Տէր Գաբրիէլեանին.

7. Լենքորանի քաղաքային դպրոցի կրօնուսոյց Ստեփան քհնյ. Տէր Ստեփանեանին.

8. Տփխիսի նահանգական և Մետեխի բանտերի եկեղեցիների Գրիգոր քհնյ. Մատինեանցին.

9. Նոր Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու Գէորգ քհնյ. Քէլլէ—Շահինեանցին,

Դ. Ս. Ստանիսլաւի 3-րդ աստիճանի.

10. Շամախու Հայոց կոնսիստորիայի անդամ Մակար քհնյ. Անտոնեանին.

11. Թալինի գործակալ Եղնիկ քհնյ. Դիլանեանին.

12. Գեօգչայի գաւառի ա. մասի գործակալ Ստեփան քհնյ. Ադիլարեանին.

13. Նոյն գաւառի բ. մասի գործակալ Աղէքսանդր քհնյ. Աբրահամեանին.

14. Բաքուի Միքայէլեան քաղաքային դպրոցի կրօնուսոյց Եղիշէ ա. քհնյ. Գեղամեանին.

15. Հին Նախիջևանի քաղաքային դպրոցի կրօնուսոյց Յակոբ քհնյ. Տէր Մինասեանին.

16. Երևանի նահանգի Ղզել-Զաքիր գիւղի արքունի դպրոցի կրօնուսոյց Սիմէոն քհնյ. Տէր Ահարոնեանցին.

17. Նոյն նահանգի Հոռոմ գիւղի արքունի դպրոցի կրօնուսոյց Սրապիոն քհնյ. Ղարաղազարեանցին.

18. Նոյն նահանգի Ղարաքիլիսա գիւղի արքունի դպրոցի կրօնուսոյց Սահակ քհնյ. Ազարեանցին.

19. Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու միաբան Գարեգին քհնյ. Թումանեանցին.

20. Թելաւի Ստեփան քհնյ. Տէր Սահակեանցին.

21. Օդեսայի հայ եկեղեցու Յակոբ սարկաւագ Յարութիւնեանցին.

Սինոդն իւր գործերից տեղեկանալով որ Երևանի Յովսէփ ա. քհնյ. Մելեանը վախճանուել է, իսկ Սրապիոն քհնյ. Ղարաղազարեանը զրկուած է հոգևոր կոչումից, որոշեց օրագրի մէջ յիշած հոգևորականների շքանշաններն

ու հրովարտակները ուղարկել ամէն մէկին պատշաճ ատեանների միջոցով, պատուիրելով սահմանուած տուրքերը իւրաքանչիւրից անյապաղ ստանալ և ուղարկել Սինոդ։ Տ. Յովսէփ ա. քհնյ. Մելեանի մահուան պատճառով նրա շքանշանը յետ դարձնել (դեպարտամենտ), իսկ Սրապիոն նախկին քհնյ. Ղարաղաղարեանինը ուղարկել իրան օրէնքի (I հատ. 2 մ. 203 յօդ. իմաստի համաձայն։ 7-ն յուլիսի. թ. 435.

— Սինոդը որոշեց Նիկողայոս վրդտ. Տէր Աւետիքեանին, իւր խնդրի (3-ն յուլիսի) համաձայն նշանակել Տաթեւի միաբան՝ պատուիրելով Տաթեւի հոգևոր կառավարութեանը վճարել Նիկողայոս վրդտին ամսական 30 ռ. աննդադրամ և հանդերձագին և կատարել ճանապարհածախքի վերաբերեալ Սինոդի կարգադրութիւնը։ 9-ն յուլիսի. թ. 436.

—Սինոդը լսելով Տփխիսի Հայոց կոնսիստորիայի յունիսի 21-ի № 2525 յայտարարութիւնը, որոշեց թոյլ տալ վիճակային արդիւնքից 300 ռ. ծախսել առաջնորդարանի նորոգութեան համար։ 9-ն յուլիսի. թ. 437.

—Սինոդը լսելով իւր հաշուարարական մասի զեկուցումը, 1909 թուի ընթացքում Մայր Աթոռի օգտին հանգանակուած գանձանակի գործի մասին, որից երևում է որ ստացուած և գրուած է Մայր Աթոռի տումարի մէջ մուտք գանագան յօդուածներով ընդ ամենը 1694 ռ. 22 կ. որոշեց այս գործը կարճել և իւր ժամանակին յանձնել դիւանին ի պահ և 1910 թուի համար Մայր Աթոռի գանձանակի մասին նոր գործ սկսել։ 9-ն յուլիսի. թ. 440.

—Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի յունիսի 17-ի թ. 1546 կոնդակը և ի նկատ առնելով Վրաստանի և Իմերեթի Հայոց թեմի Դերը գիւղի Ղևոնդ քհնյ. Աբուլեանի քահանային անվայել, անհամապատասխան և եպերելի կեանքը, որոշեց զրկել Ղևոնդ քհնյ. Աբուլեանին քահանայական կարգից և կոչումից դասելով նրան աշխարհականների կարգը։ Այս մասին յայտնել Թիֆլիզի պ. նահանգապետին։ Այս վճռի կատարման մասին հրամանագրել Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիային, պատուիրելով կատարման մասին տեղեկութիւն տալ Սինոդին։ 12-ն յուլիսի թ. 444.

—Մինոգը լսելով իւր Հաշուարարական մասի զեկուցումն, որոշեց պատուիրել Մայր Աթոռի գանձապահին Զիմօ-Աւշալեան ուղղիչ ապաստարանների օգտին 1909 թուին հանգանակուած 14 ռուբլին ուղարկել ըստ պատկանելոյն և այդ մասին գործը կարճել։ 16-ն յուլիսի. թ. 459.

—Մինոգը լսելով Ատրախանի հայոց կոնսիստորիայի այս տարուայ յուլիսի 8-ի յայտարարութիւնը, որոշեց պատուիրել Ատրախանի կոնսիստորիային, որ թոյլ տայ տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցու գումարից, վարձու տրուող տան նորոգութեան համար ծախսել 1280 ռ. 75 կոպէկ. Ծխական ժողովի այս տարուայ յունիսի 13-ի համաձայնական համեմատ։ Այս որոշման կատարման համար հրաման տալ Ատրախանի կոնսիստորիային։ 21-ն յուլիսի թ. 462.

—Մինոգը լսելով Երևանի կոնսիստորիայի տարուայս յուլիսի 7-ի № 5071 յայտարարութիւնը, որոշեց Ղուզիգիտան գիւղի ծխական ժողովի այս տարուայ յունիսի 8-ին համաձայնականի համեմատ եկեղեցու դրամագլխից 230 ռ. ծախսել եկեղեցու խաչկալի նորոգութեան և ուրիշ մանր կարկատանների համար։ Այս վճռի կատարման համար հրաման տալ Երևանի կոնսիստորիային վերադարձնելով ծխական ժողովի տրձանագրութիւնը։ 21-ն յուլիսի. թ. 463.

—Մինոգը լսելով իւր Հաշուարարական մասի զեկուցումն Մայր Աթոռի 1908 թուին հանգանակուած գանձանակագրամի գործի մասին, և նկատելով, որ գումարը 1534 ռ. 78 կոպ. զանազան յօգուտածներով մուծուած է Մայր Աթոռի մոլոց մատեանի մէջ։—որոշեց այս մասին գործը կարճել 23-ն յուլիսի. թ. 464.

—Մինոգը լսելով Երևանի կոնսիստորիայի տարուայս յունիսի 19-ին № 4569 յայտարար միջնորդութիւնը,—որոշեց թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել Քեշիշվերան գիւղի բնակիչ Աղաջան Ներսիսեանին հոգևոր կոչման մէջ նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու։ 28-ն յուլիսի. թ. 467.